

մէջ՝ խտացած, կպշուն և օշարտկային են, այն ատեն ձերեւն մէկ ու կէս բնեղ արին կտառնորի և զերջը զայն ամլացեալ\* (տէրիլիսէ) շշշերու մէջ կը դոցեն: Ապա պատիկ կոր սկաւառակի ձեւով կտրուած՝ տարրաքանորէն մաքուր թուղթեր արեան մէջ մինչ շե ցյադ կը թաթին, և յետոյ զանոնք կրակի վրայ բարձրագոյն աստիճանի տաքութեամբ կ'եփն:

Գործադրելու կերպը շատ նման է պատուասի: Նախ՝ մորթի երեսը կը քերեն՝ մինչեւ որ որոշ տեսնուիք թեթեւ սկրուռածք մը. — 24 ժամ վերջը, նայն տեղը՝ թորեալ ջրովլեցուն՝ չնշառով (rîquette) մը կը թթջեն՝ զրգուստը արգիլեռ համար: Այս գործողութեան միջաց՝ առաջական խիժէ պատիկ խոզովակով մը սկաւառակի մը՝ կը հաստատեն մինչ հետ կից: Երբ դրուած սկաւառակած ձեւ կոր թուղթը սկսի գունատիլ, նշան է՝ թէ իրեն պարունակած շիճուկը կը ծծուի. Երբ բոլորպին գունատի՝ անոր տեղ նոր մը կացըներու է մինչեւ հինգ վեց անգամ:

Տօր. Ժ. Եվելին, իր գիւտնին վերաբերեալ՝ սրտաճմիկ միանգամայն միխթարական հետեւեալ վէպը պատմած է: Առաւոտ մը կանուի՛ երբ Սան Ֆրանչսիկուն կը վերաբանար, որ հիւանդ մը այցելած էր, իր Ալանեափ տունը, և որովհետեւ կը շտապէր, յանկարծ սոցովը զարնուեցաւ պատիկ մսի կոյտի մը՝ որ սկսաւ աղաղակել: Բժիշկը ծովով տեսաւ երեք տարեկան փոքրիկ տղայ մը, Գիորգ Տովոն անուամբ՝ որուն գինով մանկիկ կը կաչէն: Բժիշկը զրկելով տղան իրեն տունը տարաւ: Ասոր մայրը՝ թարշամած երեսով՝ տղուն պէս զինով էր, և որ շատ զայրացած կ'երեւէր իր որդւոյն կանխամաման ախտին համար:

Ստէպ այսպէս փողոցներու մէջ, մինչեւ առաւոտեան ժամը չըսը ասպին անզին կը թափառի, ըստ բժշկին, լնցած գացած զինեմն մ'է այս տղաւ:

Փոքրիկ Գիորգը իւր մօր ձայնը լսելով սկսաւ զինովութեան յատուկ խնդումը, հիմնէ, հիմնէ, հիմնէ, հիմնէ, վիսրիկ դէմ կը բողոքեր:

Տօր. Ժ. Եվելին՝ ձեռք զարկաւ դարմանեւ լու զտղան, ուստի իրեն գտած շիճուկով պատուաստեց զայն: Երկու ամսոց մէջ՝ մի անգամ՝ երկու պատուասա ըրաւ Յետայնքան ժամանակի՝ աղան բոլորովին թժշկուեցաւ:

Եթէ Տ. Ժ. Եվելին չի սիալիր այս զիւտիս մէջ, և եթէ յիրափ իրեն գտած շիճուկով մեր յիշած յատկութիւնները ունի, այն ատեն ստուգիւ ամենամեծ ծառայութիւն մը մատուցած է նա՝ մարդկութեան<sup>1</sup>:

SMITHSONIAN ՀԱՍՏԱՏՈՒԹԵԱՆ ԹՊԱԿԱՑՈՒԹԵԱՆ ԹԵԱՅՑ ՊԱՇՑՈՒԲ:

ՈՒՍՈՒՄՆԱԿԻՑ աշխարհը անշուշտ յառաւանէ կը ճանչնայ՝ թէ ի՞նչ է և ի՞նչ փառաւոր հրատարակութիւններ կ'ընէ այս հաստատութիւնը: Բայց շատերը գեռ չեն դիտեր՝ թէ այդ հաստատութիւնը թղթակցութեանց պաշտօնն այ կը փարէ, և յիրափ հետարքը իրեւոյ միջնորդութեան ճշմարիտ զերը կը խաղայ. — և Միացեալ նահանգն՝ իրեն եղած ամէն խնդրոց կը պատասխանէ: Ամէն տարի զրեթէ 50,000 նամակ կը հասնի այս հաստատութեան, և սա ամենուն ալ պատասխանը կը գրէ: Ուսուցիչն Henry Հիմած է այս թղթակցութեանց պաշտօնը՝ 40 տարիէ ի վեր: Սակայ՝ բիշ շատ այլանցակ կամ՝ ասարօինակ տեղեկութիւններ կը խնդրեն: Ինչ որ ալ ըլլան՝ միշտ տալիք պատասխան մը կը գտնայ Հաստատութիւնը՝ երբ ստուգէ որ խնդրոց բարեմատութեամբ եղած է:

\* Զերմութեամբ կամ ուրիշ աղջակով մը ամէն մէջի մեկուները բալորովին չնշեն:

1. Այս փոքրիկ յօդւածքը քաղլոցինք հետեւ

և եալ Հանդէսէն. Revue des Revues, 1898 դեկտեմբեր 18. էջ 647-648: